

պետ էջմիածին, երբ հասան Սպահանէն ձեպընթաց սուրհանդակներ, որոնք գուժելով Շահ Աբասի մահն եւ անոր թոռնիկին՝ Շահ Սէֆիի գահակալութիւնը, կը հրաւիրէին զինքը հասցէնելով մեկնիլ Պարսկաստան յողջոյն նորապսակ արքային:

Ժամանակագրութեան համար հարկաւոր է հոս ճշդել Շահ Աբասի մահուան տարին եւ ամիսը: Առաքել Դաւրիթեցի Շահին մահը կը նշանակէ 1629 Յունուար 7ին եւ անոր յաջորդին գահակալութիւնը՝ նոյն ամսոյն 19ին (Դաւր. 308—309): Այս հաւաստիացումը չի համաձայնիր ժամանակագրութեան: Ղուկաս Գառնեցի Շահին մահը տեղի ունեցած կը նշանակէ 1628ին. «ի նոյն ամի մահուամբ ել յաշխարհէս արքայն Ապաս կոչեցեալ»: Այսպէս 1628ին կը դնեն նաեւ եւրոպացի հեղինակներ Շահ Աբասի մահը. դժբախտաբար հնարաւոր չեղաւ ինձ արտաքին աղբիւրներէ ճշդել մահուան ամիսն եւ օրը: Կը պահանջէ նաեւ Մովսէսի կեանքի ժամանակագրութիւնն, որ դէպքը պատահած ըլլայ 1628ի աշնան:

Նոր Շահին գահակալութիւնը բարեդէպ առիթ համարած էին Նոր-Ջուղայեցիք, որ Մովսէս վարդապետ անյապաղ ներկայանայ նորընծայ Շահին եւ դնէ անոր առջեւ 100 թուման հարկի խնդիրը: Մովսէս փութաց հասնիլ Սպահան: Այս ուղեւորութեան մասին թոյլ կու տամ Ղուկաս Գառնեցւոյ պատմել այնպէս ինչպէս իբրեւ ժամանակակից գիտէ